Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2021թ. հունվարի 27-ի № 10-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն	Վարչական ղեկավարներ	Մինչև 15.03.2021թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		Մինչև 15.03.2021թ
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2021թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2021թ.
	2. Հիմնական միջոցառումներ		
6.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Վարչական ղեկավարներ	Մշտապես

7.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշ-տության դեպքում
8.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ Վարչական ղեկավարներ	Անհրաժեշ-տության դեպքում
1	2	3	4
9.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշ-տության
10.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Վարչական ղեկավարներ	Անհրաժեշ-տության դեպքում

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ